գիրկը և սեփական ունայնութեան փոշեի մէջ թաւալվում. իսկ աւելի վատահները վերադառնալով դէպի հայրենիքը խեղդվում են շրջապատող կեանքի մեռցնող ալիքների տակ, նրանք մոռանում են իրանց բարձր իդէալները, բարոյական պրինցիպները, որոնց համար նրանք այնքան գոռում, զոչում էին ուսանող ժամանակը: Թէ առաջին և թէ երկրորդ երևոյթը շատ վնասակար է հայ ազգի պէս նոր զարգացող ժողովրդի համար. մեր նոր ուժերը այնքան քիչ են, որ նրանց մի քանիսի կորուստը մեզ համար պէտք է զգալի լինի, բայց դեռ կորստեան մտքի հետ կարելի է հաշտվել, աւելի վատ հետևանքներ ունի մեզ համար այն հանգամանքը, երբ մեր բարոյապէս և մտաւորապէս զարգացած ուժերը խեղդվում են մեր մեռցնող կեանքի ալիքների տակ. այս նոր ուժերը փոխանակ նոր գաղափարների, ազնիւ զգացմունքների առաքեալներ դառնալու, իրանք են մեռնում բարոյապէս, փոխանակ հին կեանքը նոր գաղափարների կրակով վերամաքրելու, իրանք են ընկնում հնութեան հոգոյի մէջ.... կրկնում եմ որ այս երևոյթը աւելի կորստական, աւելի վնասակար է:

Այս վնասակար երևոյթների պատճառները շատ են, բայց ես այս յօդուածովս ուշք եմ դարձնում նրանցից մէկի վրա, որը իմ կարծիքով ամենամեծ նշանակութիւն ունի այս հարցում. իմ խօսքս մեր իդեական սեռի անհամեմատ տկար և ընչին զարգացման մասին է, երբ արական սեռը ստանում է բարձր կրթութիւն, իգականը՝—այն էլ նրա փոքրամասնութիւնը հասնում է տարրական կրթութեան աստիճանին. երբ արական սեռի մտաւորական և հոգեկան աշխարհը լայնանում է, իգական սեռը դեռ պտտում է նահապետական կեանքի խաւարի մէջ, հասկանալի է որ բարձր զարգացած երիտասարդը չէ կարող գտնել այս շրջանում իր կեանքի ձշմարիտ բարեկամին, այն բարեկամին և ընկերին, որը պիտի ապրէ նրա հետ մի կեանքով այս բառի ամենալայն նշանակութեամբ, որը պիտի հասկանայ նրա ձգտումները և օգնէ նրան իր մտաւորական և հոգեկան ուժերով. նա չէ կարող գտնել այն կնոջը, որը կսթի հետ միասին պիտի ծծկնի իր զաւակին հասարակական զգացմունքներ և գաղափարներ, որը բացի իր պաճուճանքներից ծանօթ լինի ուրիշ կենդանացնող և աղնուացնող խնդիրների հետ:

Նոր մտքերի և գաղափարների ամենաառանդուն համակրողը եղել է կինը, նա միշտ եղել է բարի մտքերի ջերմեռանդ տարածողը, ընդհանրացնողը, բաւական է որ յիշենք, թէ ինչպէս կինը օգնեց քրիստոնէութեան տարածվելուն, մեր աղքատիկ պատմութիւնը պարզևեց մեզ Սանդուխտի և Խոսրովանուշի պէս հերոսուհիներ, որոնց հովանաւորութեան տակ քրիստոնէութիւնը մուտ գործեց Հայաստան. մեզ պէս փոքրաթիւ ազգի համար մեծ յանցանք է մոռանալ կնոջ բարձր հասարակական կոչումը, մեր կեանքի ամենագլխաւոր հարցերից մէկը պէտք է լինի կնոջ մտաւորական կրթութիւնը, նրա բարոյական վերակենդանութիւնը և նրա կատարեալ ազատութիւնը բնաւորական լծից: Հայ երիտասարդի ետևից պէտք է հետևէ և հայ օրիորդը դէպի մտաւորական կենտրոնները, որտեղ այս երկու ուժերը միասին զարգանալով և գրահաւորված միանման գաղափարներով և ձգտումներով պէտք է բացեն նոր կեանքի ասպարէզը:

Երբ անցեալ տարի «Մշակի» թերթերում առաջարկվեց կազմել «կանանց ընկերութիւն», նրա նպատակներից մէկն էլ հայ կնոջ բարձր կրթութիւնն էր. մեր հասարակութիւնը անտարբեր մնաց այն առաջարկութեան. նա կարծես ամեն մի գործում զուրկ է խնիցիատիվից, նա պպարապ է կատարված փաստին երկրպագելու, բայց ինքը անընդունակ է ըստեղծելու նրան: Կ. Պոլսում կազմված «Պարզասէր հայուհեաց ընկերութիւնը» աւելի մեծ հետաքրքրութիւն և համակրութիւն շարժեց թէ մամուլի և թէ հասարակութեան կողմից, քան առաջարկվող ընկերութիւնը, չը նայելով որ «Պարզասէր» ընկերութեան նպատակն է աւելի հարուստ հայ կնոջ ազատել մի քանի շռայլ պաճուճանքներից, մինչդեռ կանանց ընկերութեան նպատակն էր հայ կնոջ բարոյական վերակենդանութիւնը, նրա մտաւորական զարգացումը, նրա մարդկային իրաւունքների վերականգնումը և նրա կատարեալ ազատութիւնը: Հասարակական անտարբերութեան դառն բաժակը նոր սերունդը ստիպված է խմելու. նա իր ուսերի վրա պէտք է տանի նրա բոլոր ծանրութիւնը, ուրեմն նոր սերունդը պէտք է մտածէ վերոյիշեալ հարցի մասին, հայ ուսանողութիւնը առաջինը պէտք է ձայն բարձրացնի այս սրբազան գործի համար: Մեր նախորդները երդեր յօրինեցին, զովեցին հայ աղջկայ ֆիզիկական գեղեցկութիւնները, իսկ մենք պարտաւոր ենք նպաստելու. նրա մտաւորական և հոգեկան գեղեցկութեան: Ես վստահանում եմ յայտնել Մոսկվայի հայ ուսանողութեան կողմից, որ նա բոլոր սրտով պատրաստ է օգնելու թէ նիւթապէս և թէ բարոյապէս ամեն մի հայ կնոջ, որը կը փափագէ բարձր կրթութեան: Ես համոզված եմ որ Մոսկվայի հայ ուսանողութիւնը ընդունակ է մի այսպիսի գործ կատարելու, որովհետև նա արդէն ցոյց է տուել թէ որպիսի համակրութեամբ կարողանում է օգնել հայ աղքատ երիտասարդին. այսպէս նա պիտի առաջին քայլը անէ այն մեծ շարժման, որը կրում է իր վրա «հայ կնոջ մտաւորական և բարոյական վերակենդանութեան» անունը, որից կախված է ամբողջ հասարակութեան կանոնաւոր զարգացումը և նրա երջանկութիւնը:

Ն. Աբէլեանց

Մոսկվա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Սևան, 15 յունվարի

Ահա ընդ սմին ուղարկում եմ 23 բուբլ, խոնարհաբար խնդրելով հասցնէք «Արարատեան» ընկերութեան ձեռամբ ի քաղաքն Վան ի Լիպք գիւղն, ի ձեռն Ցունան Ցակոբ Վարդապետեանին ստանալ պատասխան և չուտով ուղարկել ինձ. իմ հասցէս է՝ Ցակոբ վարդապետ միաբան Սևանայ, ի գիւղն Եկենովկա ի Սևան.

Ցակոբ Վ. Մկրտչեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շաբաթ, յունվարի 26-ին Գօդֆրուա եղբայրների ֆրանսիական ցիրկում լինելու է Թիֆլիսի հասարակութեան սիրելի պար եկող արտիստ Գրացիօզիի բենեֆիսը. Այդ ներկայացման ժամանակ շատ նորութիւններ են լինելու, իսկ կիրակի, յունվարի 27-ին մի նոր պատմական ֆանտաստիական նշանախաղ է ներկայացվելու, որի վերնագիրն է «Օբերտ և իր բարեկամ Բերտրամը». Այդ նշանախաղի համար նոր դեկօրացիաներ և զգեստներ են պատուիրել Գօդֆրուա եղբայրները. Շաբաթ և կիրակի օրվայ ներկայացումների համար պահված են Լէօնս և Իւլիա վելօսիպեդիստէկվիլիբրիստ արտիստները, որոնք չուտով գալու են Թիֆլիսից. Տեղերի գները սովորական են, ներկայացման սկիզբը 7½ ժամին.

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Նոր հոգաբարձուները շատ աշխատեցին, որ հները 500 ր. աւելի պարտքի համար վկայական տան, բայց այս վերջինները չը համաձայնեցին. Նոր հոգաբարձուները ճարահատված նրանցից հաշիները առան.»

—

Ղազախի գաւառի մէջ գտնված ԿՈՂԲ գիւղից մեզ հաղորդում են, որ գիւղի ծխական քահանայ Արգարիոս Տէր-Ցարութիւնեանի աշխատութեամբ մի ծխական դպրոց է բացվել.

—

Մեզ գրում են ՆՈՒԽՈՒՑ. «Բացի այն 15,000 բուբլուց, որ հաւաքվեցաւ մեր քաղաքում ցորեն գնելու և մի և նոյն գնով աղքատների վրա ծախելու համար, Թիֆլիսից դարձեալ 5000 բուբլ ստացվեցաւ, որով Թիֆլիսում և Բագուի մէջ պէտք է ցորեն առնվի և աղքատներին տրվի 10 տարի ժամանակով.»

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ թատրոնասէր երիտասարդները չափազանց դժուարանում են պիեսայի ընտրութեան մասին, որովհետև նախիջևանցիք չեն սիրում որ մի գրուածքի մէջ սիրոյ մասին մի բառ անգամ լինի. Բեմ դուրս եկող կանայք ազէտ հասարակութիւնից արհամարհված են. Թղթակիցը լսել է, որ հինգ տարի առաջ օր. Աւետիքեանը բեմ է դուրս եկել և նրան հասարակութիւնը մինչև այժմ անպատուում է. թատրոնասէրները առհասարակ նախիջևանցիների կարծիքով լիբ են.

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ. Արտվինի բնակիչներից մէկը վերադառնալով Արդահանից, երբ անցնում է Կարծախ գիւղի մօտ եղած նախկին պահականոցի (ПОСТЪ) առաջ, պատահում է մի հայի, որ խնդրում է արդվինցուն օգնել իրան պահականոցում մնացած իր հիւանդ ընկերին ձիու վրա նստեցնելու համար. Արտվինցի հայը ոչինչ չը կասկածելով, գնում է և կարծեցեալ հիւանդին արաղ է խմացնում, հաց է ուտացնում նրան կազդուրելու համար. Կարծեցեալ հիւանդը արտվինցու օգնութեամբ վեր է կենում և յանկարծ բռունցքի մի այնպիսի հարուած է տալիս արտվինցուն, որ նա ուշաթափված գետին է գլորվում. Ջարագործները խեղճի ոտք ու ձեռքը կապում են, գրպանից հանում են նրա ունեցած փողը և իրանք փախչում են. Ողորմելին մի ամբողջ գիշեր մնում է կապած և վերջ ի վերջոյ նրան աջողվում է կապանքներից ազատվել և գալ Ախալքալաք. Կողոպտվածի ձին, որի վրա չարագործները հեծել և փախել էին, գտան քաղաքի մօտակայ Վ. գիւղի մօտ. Այդ գործի մասին արդէն քննութիւն է սկսված.

—

Մեզ հաղորդում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, որ այդտեղ նուիրատուութիւններ են հաւաքվում ռուս բանաստեղծ Լերմոնտովի արձանի համար, որ պէտք է դրվի Պիատիգօրսկում.

—

ԹԻՖԼԻՍԻ մթերանոցում պաշարեղէնների գինը հետզհետէ բարձրանում է. Մսի ֆունտի գինը նշանակված է 12 կ., բայց 15 կ. հազիւ կարելի է օրինաւոր միս գտնել.

—

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ գրում են, թէ դպրոցների հին նուիրատուութիւնների պարտամուրհակները նորոգվեցան, որոնց ժամանակից 10 տարուց աւել անցել էր. Եւ մի քանի պարոններ նոր նուիրատուութիւններ արեցին. Եղբարք Տէր-Մէլքէլեանք նուիրեցին 3200 բուբլի, որի տոկոսով մշտապէս 4 որդեգիր և 2 որդեգրուհի պիտի սովորեն Ագուլիսի դպրոցներում. Պ. Ս. Հախնազարեանցը նուիրեց 600—բուբլ, որի տոկոսով մի որդեգիր պիտի սովորի նոյն դպրոցներում յանուն իր հանգուցեալ հօր. Եղբարք Մ. և Ս. Աբեանցները նուիրեցին նոյն մտքով 300 բուբլի.

—

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ հաղորդում են, թէ ցորենի պուդը այստեղ ծախվում է 3 բուբլ 20 կօպ. և շատ աղքատներ հաց չեն գտնում ուտելու. Հասարակութիւնից ընտրվեցան եօթն անձինք, որոնք յօգուտ աղքատների ստորագրութիւն բաց արեցին, որի գումարը հասել է 1000-բուբլու. Այս գումարով ցորեան են առնում և էժան գնով, այսինքն պուդը 1—ր. 20 կօպէկով ծախում են աղքատներին. Ցանկալի կը լինէր, որ ուրիշ տեղերում ազուէցիներից օրինակ առնէին.

—

Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Ամսիս 27-ին, կիրակի օրը, ժամը 11-ին առաւօտեան, Թիֆլիսի Ս. Գայիանեան օրիորդական Ուսումնարանի դահլիճում պիտի կարդացվի ժամանակաւոր մասնաժողովի ձեռքով պատրաստված «Հայուհեաց բարեգործական ընկերութեան» կանոնադրութիւնը. Այս մասին մասնաժողովը պատիւ ունի յայտնելու Թիֆլիսի յարգելի հայուհեաց, խոնարհաբար խնդրելով պատուել յիշեալ նիստը իրանց ներկայութեամբ.»

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Մեր հինգ համալսարանականներից մինը պակասեցաւ. դա է մեր քաղաքին յայտնի փաստաբան Միքայէլ Տէր-Աւետիսեանց, որ երկարտև բարակացաւից յետոյ, վախճանվեցաւ յունվարի 7-ին. Գուցէ հարցնէք, թէ ինչ հասարակաօգուտ գործերով նշանաւոր եղաւ հանգուցեալը. Ցաւում եմ որ ձեր հարցին գոհացուցիչ պատասխան չեմ կարող տալ.»

—

Մեզ հաղորդում են ՆՈՒԽՈՒՑ որ այդտեղի նոր հոգաբարձուներից երկուսը, պ. պ. Ց. Տէր-Խաչատրեանց և Մ. Աբրահամեանց յունվարից արդէն սկսեցին ձրիապէս դասատուութիւն անել ուսումնարանում, մինչև որ դպրոցը կապահովվի նիւթական աղբիւրներով.

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. բժիշկ Գ. Տէր-Գրիգորեանցի «Վարակիչ հիւանդութիւններ» վերնագրով գիրքը. Այդ գրուածքը մաս մաս տպվում էր «Արարատ» ամսագրի մէջ, իսկ ներկայ 1880 թուին հրատարակվեցաւ առանձին գրքոյկով Վաղարշապատում, Ս. Էջմիածնի տպարանում. Հեղինակը խօսում է իր գրուածքի մէջ ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւնների մասին՝ ծաղիկ, կարմրուկ, սկարլատին, բծաւոր տիֆ, անդրաղարձ տենդ, դիֆտէրիտ, ընդհատ տենդ, խոլերա, դեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ. Մեզ անհասկանալի է թէ ում համար և ինչ նպատակով են գրվում այդ տեսակ գրքեր. Եթէ պ. բժիշկը գրել է այդ գիրքը իր հմտութիւնները ցոյց տալու համար,—այն ժամանակ մենք խօսք չունենք ասելու. Բայց եթէ գիրքը հեղինակած է որպէս ժողովրդական ձեռնարկ ամբոխին առաջնորդելու նպատակով վարակիչ հիւանդութիւնների դէմ նրան պահպանելու համար,—գրուածքը ամենևին իր նպատակին չէ հասնում. Գիրքը լի է ցիտատներով երևելի բժշկական հեղինակութիւններից, բայց ոչ հիւանդութեան նկարագիր կայ, որ ժողովուրդը նկարագրված հիւանդութիւնից օգուտ քաղի, երբ հանդիպում է իրականութեան մէջ նոյն հիւանդութեան նշաններին, ոչ էլ պահպանիչ և բժշկող միջոցներ են ցոյց տուած գրքի մէջ. Հեղինակը շատ է խօսում հիգիէնական և ասենիզացիական միջոցների վրա, բայց այնքան ընդհանրական ձևով որ գիրքը աւելի նման է մի ձեռնարկի պետութեան, նահանգի, կամ գաւառի վարչութեան ձեռքում ուղեցոյց լինելու, քան թէ մի ձեռնարկի ժողովրդի ձեռքում պիտանի լինելու համար. Միայն իր գիտութեամբ փայլելու համար չարժէ գրել հայերէն լեզուով այդ տեսակ գրքեր, իսկ հայ ժողովրդի համար դա ապարդիւն աշխատանք է, որի համար հարկաւոր են հասկանալի, ժողովրդական և գործնական խրատներ վարակիչ հիւանդութիւններին առաջն առնելու համար. Ուրեմն հայերէն լեզուով այդ տեսակ գիրք հրատարակելը բոլորովին ապարդիւն է, իսկ ռուսերէն լեզուով նա կը լինէր միմիայն մի թոյլ քաղուածք արդէն յայտնի գրուածներից. Եւ «Արարատ» ամսագիրը երևակայում է իրան որ մեծ օգուտ է բերում ժողովրդին հրատարակելով այդ տեսակ գրուածներ, որոնք բոլորովին անպէտք են ժողովրդի համար.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունվարի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է հետևեալը. հրամայված է, որ 1880 թուի առաջին կէսում, Կիէվի, Վոլինսկի և Պոդոլսկի նահանգներում, դատաստանական ընդհանուր օրէնքներ մացնվին: Նոյնպէս հրամայված է, որ Եյսկում, գաւառական ուսումնարանի փոխարէն, վեց դասատուններով բէալական դպրոց բացվի: Կովկասեան զինուորական բժշկական մասնի տեսուչ Բէմմերտին շնորհված է Աննա առաջին աստիճանի շքանշանը:

ԼՕՆԴՕՆ, 22 յունվարի (3 փետրվարի:) Լօրանսով երէկ հասաւ այստեղ, և այսօր այցելից Բիկոնսֆիլդին:

ԲԵՐԼԻՆ, 22 յունվարի (3 փետրվարի:) Հաւատայնում են, որ ֆրանսիական դեսպանը վաղը ուղևորվում է դէպի Ֆրանսիա:

ԼՕՆԴՕՆ, 24 յունվարի: Այսօր ժամը 2½-ին Վիկտորիա թագուհին բացեց պարլամէնտը: Լօրդ Կէրնս կարդաց գահկան ճառը, որ շատ խաղաղասիրական է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ